ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունիսի 2026թ. թիվ 392-Ա

Հ.ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի, 175-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 2-րդ մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Լոռու մարզային տարածքային ստորաբաժանման կողմից տրված ծանուցագիրը և հաշվի առնելով Հ.Վարոսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայկ Գրիգորի Վարոսյանին ազատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից ս/թ հունիսի 9-ից մինչև հուլիսի 3-ը ներառյալ՝ պահպանելով աշխատատեղը:

2. Հ.Վարոսյանի բացակայության ժամանակ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ Ջեմմա Ամիրխանյանին:

3. Հ.Վարոսյանի վարձատրությունն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունիսի 8
ք.Վանաձոր